

ԱՎԻԿ ԻՍԱՀԱԿՅԱՆ

Քանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտ
iavetik44@gmail.com

ORCID iD: 0009-0001-1852-0720

DOI: 10.54503/978-5-8080-1587-6-188

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԸ ԿՈՍՏԱՆԴՆՈՒԴՈՒՍՈՒՄ (1911-1912): ԷՋԵՐ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քանալի բառեր - Ավ. Իսահակյան, Կոստանդնուպոլիս, երիտթուրքեր, արևելյան պոեզիա, «Ուստա Կարո»:

Ամփոփում

Առաջին անգամ հարուստ փաստագրական նյութի հիման վրա հանգամանալից կերպով ուսումնասիրվում է Ավետիք Իսահակյանի ստեղծագործական և հոգևոր կյանքի մի կարևոր՝ կոստանդնուպոլսյան 1911–1912 թթ. շրջան, որը կազմում է նրա գիտական կենսագրության անքակտելի մասը: Ներկայացվում են Իսահակյանի՝ Կովկասը լքելու պատմական և քաղաքական նախադրյալները, ինչպեսև թուրքահայ իրականության նկատմամբ ունեցած իրատեսական վերաբերմունքը: Այս ամենին զուգահեռ ուսումնասիրվում է նաև նրա ստեղծագործական գործունեության և ինքնավերահաստատման ընթացքը օտարության մեջ: Վերլուծվում են Իսահակյանի այդ շրջանի բանաստեղծությունները, արձակ գործերը, նամակները, հոդվածները, որոնք վկայում են բանաստեղծի անսպառ ստեղծագործական ներշնչման և հոգևոր տոկունության մասին: Հատուկ ուշադրություն է դարձվում «Ուստա Կարո» վեպի առաջին տարբերակի ավարտման աշխատանքին, «Աբու-Լալա Մահարի» պոեմի առաջին հրատարակությանը, «Աղա Նազար» հեքիաթի և մի շարք բանաստեղծությունների ստեղծման պատմությանը:

AVIK ISAHAKYAN

Doctor of Philology, Professor

Institute of Literature after. M. Abeghyan of the NAS RA

iavetik44@gmail.com

ORCID iD: 0009-0001-1852-0720

AVETIK ISAHAKYAN IN CONSTANTINOPLE (1911-1912) PAGES FROM SCOLARY BIOGRAPHY

Keywords: A. Isahakyan, Constantinople, Young Turks, Eastern poetry, exile, Usta Karo.

Abstract

For the first time, based on extensive documentary materials, the study provides a detailed examination of a significant period in Avetik Isahakyan's creative and spiritual life — his Constantinople years (1911–1912), which form an integral part of his scholarly biography. The article presents the historical and political circumstances that led Isahakyan to leave the Caucasus, as well as his realistic attitude toward the Turkish-Armenian reality. Alongside this, the paper explores the poet's creative activity and process of self-affirmation in exile. Isahakyan's poems, prose works, letters, and articles from this period are analyzed, revealing his inexhaustible inspiration and spiritual resilience. Special attention is given to the completion of the first version of the novel **“Usta Karo,”** the first publication of the poem **“Abu-Lala Mahari,”** and the creation of the tale **“Agha Nazar”** and several poems.

АВИК ИСААКЯН

*Доктор филологических наук, профессор
Институт литературы им. М. Абеяна НАН РА*

iavetik44@gmail.com

ORCID iD: 0009-0001-1852-0720

АВЕТИК ИСААКЯН В КОНСТАНТИНОПОЛЕ (1911-1912) СТРАНИЦЫ НАУЧНОЙ БИОГРАФИИ

Ключевые слова: А. Исаакян, Константинополь, младотурки, точная поэзия, «Уста Каро».

Аннотация

Впервые на основе обширного документального материала подробно исследуется важный период творческой и духовной жизни Аветика Исаакяна — его константинопольский этап 1911–1912 гг., являющийся неотъемлемой частью научной биографии поэта. В работе раскрываются исторические и политические предпосылки, побудившие Исаакяна покинуть Кавказ, а также его реалистическое отношение к турецко-армянской действительности. Параллельно рассматривается процесс его творческой деятельности и духовного самоутверждения в изгнании. Анализируются поэтические и прозаические произведения, письма и статьи Исаакяна данного периода, свидетельствующие о его неиссякаемом вдохновении и внутренней стойкости. Особое внимание уделено завершению первой версии романа «Уста Каро», публикации поэмы «Абу-Лала Маари», созданию сказки «Ага Назар» и ряду стихотворений.

«Վատ տեղ մտավ մեր արևը...»

Առաջին պաշտոնական տեղեկությունը Իսահակյանի Կոստանդնուպոլսում գտնվելու մասին՝ գալիս է ցարական ժանդարմերիայի պահնորդական բաժնի պոլսյան գործակալներից, ինչի մասին Թիֆլիսի նահանգային ժանդարմական վարչության պետը՝ գնդապետ Պաստրյուկինը հետևյալ «հույժ գաղտնի» հրահանգն է իջեցնում Թիֆլիսի պահնորդական բաժնի պետին.

«Շտապ. հույժ գաղտնի.

Ոստիկանության դեպարտամենտի տեղեկություններով՝ «Դաշնակցություն» կուսակցության ժողովին անցյալ օգոստոս ամսվա վերջին՝ Կոստանդնուպոլիս են ժամանել հետևյալ անձինք 1/Ավետիս Ահարոնյան, 2/Գասպար Խաժակ (Խաժակյան), 3/Ավետիս Իսահակյան, 4/Սեմյոն Զավարյան, 5/ Հարություն Շարիկյան, 6/Ստեփան Լիսիցյան, 7/Միքայել Հովհաննիսյանց, 8/Ռուստեմ Զորյան. բացի դրանից ժամանել են ահաբեկիչներ՝ Գարեգինը (շլդիկ), Լևոնը և հիշյալ Սեմյոն Զավարյանի եղբայրը, ինչպես Թիֆլիսում բնակվող և վերջին ժամանակներում Պարսկաստանում գտնվող Մուրադը, իսկ համագումարի բացման առթիվ սպասվում էր Ամերիկայից եկող հայտնի Խաչատուր Մալումյանը (Ակնունի): Հայտնելով այս ի լրացում 24.V N101641, IXN11046 գրառումների, խնդրում եմ Ձերդ գերազանցությանը հայտնել ինձ Ձեր ունեցած տեղեկությունները հիշյալ ժողովի մասին:

Գնդապետ Պաստրյուկին»:

Երևի առաջին անգամ վերջին 10-15 տարիներին Իսահակյանն զգաց, որ այլևս ժանդարմական դիտակի տակ չէ իր յուրաքանչյուր քայլը, որ ինչ-որ մի հեռավոր հյուսիսային երկրի մայրաքաղաքում հայ հայրենասեր գործիչների դեմ հյուսվող «դատական գործը», որը «հիմա 130 հատոր է, իսկ տպագիր 10.000 երես», և օր առաջ ինքը կարող էր հայտնվել Սիբիր աքսորվող կալանավորի վիճակում՝ անցյալ է, դառը հուշ: Որերո՞րդ անգամ գործեց նրա զորեղ պոետական ներըմբռնումը (ինտուիցիան):

Եվ նա հեռացավ: Ճիշտ է, երկիրն, ուր նա առաջին անգամ էր ոտք դնում Աբդուլ Համիդի 33 տարվա արյունոտ տիրակալությունից հետո, երբ «հայկական կոտորածների» կազմակերպիչը 1909 թ. գահընկեց էր արվել, և հռչակվել էր «սահմանադրական պետություն», մի տեսակ խաբկանք էր ստեղծում, որ նա բռնապետություն չէ: Երկիրը կառավարում էր երիտթուրքերի կուսակցությունը, որն իրեն բարեկամ էր ցույց տալիս հայերի հանդեպ: Ահա այդ համընդհանուր խաբկանքի ու կեղծիքի մթնոլորտը մուտք գործեց Իսահակյանը: Թուրքիայի հայերի մեծամասնությունը միամտաբար հավատում էր խորհրդարանում երիտթուրքերի տված եղբայրության և հավատարմության երդումներին: Դարասկզբի Թուրքիայում գործում էին հայկական եկե-

ղեցիները, լույս էին տեսնում հայերեն թերթեր և ամսագրեր, նոր գրքեր, գործում էին հայկական թատերական և երաժշտական բազմաթիվ խմբեր: Կային բոլոր մեծ քաղաքներում հայկական դպրոցներ և վարժարաններ: Թվում էր, թե հայերը կարող են ապրել հանգիստ ու անվրդով: Թուրքահայ մտավորականության մեծ մասը՝ խաբված ու մոլորված երիտթուրքերի ամբոխավար ու նենգ քաղաքականությամբ, մինչև անգամ կարեկցում էր Արևելյան Հայաստանի՝ ցարի լծի տակ դաժանորեն հետապնդվող իր եղբայրներին ու քույրերին: Սակայն Իսահակյանը՝ գուցեև իր զորեղ ներըմբռնման շնորհիվ դույզն իսկ չէր հավատում իթթիհատականների «սահմանադրական» խոստումներին, եղբայրության հավատացումներին, կեղծ երաշխավորումներին: Քանզի թուրքն ի վիճակի չէր փոխելու իր մաշկը: Նա ճշմարտացիորեն ըմբռնում էր երիտթուրքերի՝ իշխանության եկած այդ կեղծ ու սուտ սինլորների էությունը, նրանց ազգայնամոլ ու ագրեսիվ քաղաքականությունը, նրանց հայատյաց գաղտնի ծրագրերը:

Իսահակյանը նախկինում Կ. Պոլսում երբևէ չէր եղել, և արևելահայ մարդու համար այստեղ շատ բան պարզապես անսովոր էր: Արևելքում սա իր առաջին կայանն էր, որը բարեբախտաբար եղավ և վերջինը:

Արևելքը բանաստեղծի համար առաջին հերթին նրա զորեղ պոեզիան էր: Իսահակյանի կյանքում մեծ դեր էր ունեցել արևելյան պոեզիան՝ Ֆիրդուսին, Սաադին, Հաֆեզը, Օմար Խայամը, Աբուլ-Ալա-ալ Մահարին, Ռուդաքին: Նրա պատկերացրած Արևելքը բարձր հոգևոր մշակույթ էր, որն իր ուրույն հետքն էր թողել ողջ համաշխարհային մշակույթի զարգացման վրա: Պարսիկ պոետները, արաբական արվեստը խորը ազդեցություն են ունեցել Իսահակյանի ստեղծագործության վրա: Սակայն այն իրականությունը, որն իրեն պարզեց ետհամիդյան Թուրքիան՝ հանձինս իշխանության եկած իր նոր ուժերի՝ երիտթուրքերի, բացարձակապես ընդունելի չէր բանաստեղծի համար: Իսահակյանի կյանքի լավագույն մեկնաբանը, ուղեկիցն ու թարգմանը՝ նրա քնարական բանաստեղծություններն էին ու նամակները:

Այս նոր վիճակում, նոր իրադրությունում Կ. Պոլսից գրած նրա

առաջին նամակն ուղղված էր բանաստեղծի համար շատ կարևոր մի տիկնոջ՝ Վիկտորիա Աբովյանին, որի հանդեպ տածած իր զգացմունքներն Իսահակյանը երբեք չի փորձել թաքցնել: Եվ ինչպես երևում է, այդ զգացմունքները բանաստեղծն առավել արտահայտել է հենց Վիկտորիային ուղղված նամակներում:

<19>11 սեպտեմբ. Կ. Պոլիս.

Վիկտորիա ջան, հավերժական սիրելի Վիկտորիա ջան, եթե իմանաս որքան ուրախացա նամակդ ստանալով, երևակայիր առաջին նամակն է, որ ստանում եմ հայրենիքիցս... Ես օգոստոսի 14-ից արդեն Կ. Պոլիսում եմ. սա մի հսկա քաղաք է Վոսփորի, Ոսկեղջյուրի և Մարմարա ծովի շուրջը փռված, 20 վերստի վրա, խառն, լաբիրինթ քաղաք է. ազգերի խառնարան. ունի 1.500.000 բնակիչ, թուրք, հույն, հայ, ֆրանսիացի, իտալացի, հրեա, սպանացի, գերմանացի, անգլիացի, սլավոններ, ունգարներ, Աֆրիկայից, արաբներ, քրդեր և շա՛տ, շա՛տ ազգեր. ուղղակի կոսմոպոլիս, ամեն լեզու կա, և ամեն ազգի դրամ, կոստյում, ամեն ազգի հիմնարկություններ, եկեղեցիներ, դպրոցներ, բանկեր, փոստեր: Բազմակողմանի կյանք կա, և շա՛տ մեծ, շքեղ, շռայլ կյանք: Գտնվելով երկու աշխարհների՝ Եվրոպայի և Ասիայի միացման տեղում՝ դարերից ի վեր եղել է երկու մայր ցամաքների ժամադրաժայռը... ունի չտեսնված բնության գեղեցկություն և դիրք, բայց ներքուստ այնքան էլ սիրուն չէ. մարմարե բյուրավոր պալատների մոտ – աղբակույտեր, ամենավերջին մոդայի մոտ՝ ցնցոտիներ, ավտոմոբիլների մոտ՝ գոմշի սայլեր... Պոլիս չեմ մնա, կանցնեմ արտասահման՝ Յուրիխ-Լոզան-Ժնև, այնտեղ թե՛ ապրուստը թանձր չէ և թե՛ համալսարան կա. այստեղ կուլտուրական քաղաք չէ, այլ վայելքի, պոռնկության, աննման կանայք կան, և համարյա ո՛չ մի կարգին թատրոն-կամ օպերա կամ գրադարան-ընթերցարան. մարդիկ ընկած են փող աշխատելու և կոպիտ վայելքի ետևից» (Իսահակյան Բ, 2020: 183-185):

Ինչ հստակ երևում է՝ ընդամենը մեկ ամիս Կ. Պոլսում ապրած Իսահակյանը ըմբռնել էր այս քաղաքի բարքերն ու էությունը: Այստեղ շա՛տ և շա՛տ բան Իսահակյանին ընդունելի չէր: Ո՛չ քաղաքի անչափ գեղեցկությունով էր նա հիացած, ո՛չ մարդկանց բարքերով: Եվ պա-

տահական չէր, որ հենց առաջին նամակում, նա գրում է, որ մտադիր է այստեղից հեռանալ: Նույն հասցեատիրոջը մեկ շաբաթ անց նա գրում է ավելի հստակ ու վճռական իր տպավորությունների և անելիքների մասին:

«<1911> 19 սեպտ. Կ.Պոլիս.

Կ.Պոլիսը չնայելով իր գեղեցկություններին, բայց դուրըս չեկավ. չհավանեցի. կուլտուրապես ցած և պոռնիկ քաղաք է, մտավոր-հոգեկան-գեղարվեստական կյանք չկա. կա միայն շռայլություն, փողի մեծ տենչ, վաճառականություն և պոռնկություն, եվրոպական բուրժուաների փողերը այստեղ են հոսում և միայն մսեղեն վայելք. գրականությամբ և գիտությամբ պարապողների համար անհարմար, անպետք միջավայր է: Ես որոշել եմ Պոլիս չապրել. հիմա ծրագրել եմ մի 6 ամսով ճամփորդություն դեպի Կիլիկիա, Սիրիա, Պաղեստին, Եգիպտոս, իսկ հետո ապրել Շվեյցարիայում...

Առայժմ ես, ինձ թվում է, որ մի իջևանումն եմ ապրում» (Իսահակյան բ, 2020: 186-187): Կ. Պոլիսը չընդունելու, չհամակերպվելու տենդենցը երևում է այդ քաղաքից

գրված նրա համարյա բոլոր նամակներից. «Ընդհանուր առմամբ շատ տաղտկալի է կյանքը, շրջանակ չկա, ընտանիքներ չկան, կնոջ հասարակություն չկա. վատ տեղ մտավ մեր արևը» Ավետիս Ահարոնյանին 1911, 2 հոկտեմբերի, Կ.Պոլիս (Իսահակյան բ, 2020: 190):

«Պոլիսը սպասածիցս վատ գտա. ամեն կերպ Թիֆլիսը բարձր է այստեղից, թե՛ իր մտայնությամբ և թե՛ իր հայությամբ» Գարեգին Լևոնյանին, 1911, 12 նոյեմբեր, Կ.Պոլիս, (Իսահակյան բ, 2020: 190):

Այսքանից հետո միայն կարելի է զարմանալ, որ ուղիղ մեկ տարի այնուամենայնիվ Իսահակյանն ապրեց Կոստանդնուպոլսում և արգասաբեր ստեղծագործեց:

Ստեղծագործելու անհագ տենչով

Եվ որքան էլ զարմանալի չթվա, Իսահակյանին Թուրքիայում հաջողվեց բավական արգասաբեր աշխատել: Եվ երևի ստեղծագործական աշխատանքն էր, մանավանդ «Ուստա Կարո» վեպի շուրջ, որ Իսահակյանը երկարաձգեց իր մնալը Կոստանդնուպոլսում:

Հենց Կ. Պոլիս գալու առաջին օրը նա գրեց իր լավագույն բանաստեղծություններից մեկը.

*Կըրեսնեմ ահա, լուռ երեկոյին
Բարակ ծուխ կելնի իմ հոր օջախեն.
Եվ ուռիներս մարմանդ կօրորվին,
Ծղրիդը կերգե անտես խորշերեն...*

*Մեղմ ճրագի տակ նստել է տխուր
Ծերունի մայրս՝ մանկիկս գրկին. –
Մուշ – մուշ քնել է մանկիկս՝ անդորր.
Ու աղոթք կանե մայրիկս՝ լռին. –*

*«Ամենն առաջ թո՛ղ ինքը հասնի
Ամեն հիվանդի, հեռո՛ւ ճամփորդի.
Ամենն հետո թո՛ղ ինքը հասնի
Քե՛զ, իմ խեղճ որդի՛, իմ պանդուխտ որդի»:*

*Անո՛ւշ ծուխ կելնի իմ հոր օջախեն,
Մայրս կաղոթե՛ մանկիկս գրկին.
Ծղրիդը կերգե անտես խորշերեն
Եվ ուռիներս մարմանդ կօրորվին...*

1911, օգոստոսի 13,

Կ. Պոլիս (Իսահակյան, 2003: 388)

Այն առաջին անգամ հրատարակվեց հայկական «Ազատամարտ» թերթի շաբաթական հավելվածում (1911, N19, էջ 7) հենց «Հայրենի օջախ» վերնագրով¹: Պետք է առանձին դրվատանքի խոսք ասել Կ. Պոլիսի «Ազատամարտ» թերթի խմբագրությանը, որ մշտապես սիրով և առաջինը իրենց պարբերականում տպագրում էին Իսահակյանի նոր երկերը:

Մեկնարկը տրված էր, և այսօր Իսահակյանի ստեղծագործությունների մատենագիտական ցանկում մենք հաճախ ենք հանդիպում

¹ Բանաստեղծության հետագա հրատարակություններում այն տպագրվել է առանց խորագրի:

Կ. Պոլիս, Պրինկիպո, Իզմիթ աշխարհագրական անվանումներին: Իսկ որպես իր կոստանդնուպոլսյան հասցե նա նշում է հետևյալը հենց նոր ժամանած. «Typeя. Constantinople, Lebraire populaire “Ardzive” Rue Marpoudjilar N22 հանձնել Հայկ Գուսանյանին»: Այսինքն՝ Կ. Պոլիս հայկական գրադարան «Արծիվ», իսկ 1911 թ. նոյեմբերի 12-ին նա տալիս է հետևյալ հասցեն. «Constantinople, Gran Rue Pera, Kutchuk Parmak Kapou N93 V.Dikranian C. հանձնել Ավետիք Պայազատյանին»: Երկու դեպքում էլ ազգանունը Իսահակյան չի նշում:

Իր մշտապես սիրած «փոթորկոտ ծովի» կերպարը կրկին ոգևորում է նրան, լիցք է տալիս գրելու հետևյալ բանաստեղծությունը՝ «Փրփուր բաշերով ծովը ամեհի...»:

Պոլսից Պրինկիպո կղզի ժամ ու կես հեռու է այս կղզին, որ ուղակի զմրուխտ է ծովի մեջ. սա ամենասիրուն կղզին է ծովում՝ ազնվականների, արքայազնների, դեսպանների, իշխանների սքանչելի ապարանքներով լի, խաղա՛ղ, անդորր և շողշողուն ալիքները միշտ գուրգուրում են կղզու չորս կողմը. կղզին ծածկված է մայրի անտառով, և հազար ու մի տեսակ ծաղիկներով, վարդերով, թզենի, դափնի, և այլն, և այլն: Իմ տունը գտնվում է կղզու վերև, բլրի գլխին, անտառի ափին, մեկ լուսամուտս անտառի վրա է բացվում, մեկերը՝ ծովի: Պանսիոներ եմ մեկի մոտ. ունեմ փոքրիկ սենյակ, գրասեղան, դիվան... ամբողջ օրը կարդում եմ, գրում և ծովափին ու անտառում թափառում. ընկերներ կան. ինձ պես տարագիր. Պոլիսը քաղաքական թռածների կենտրոնավայրն է հիմա...

...Ասում են՝ թե 1913 թ.-ին ներումն կլինի և կարող կլինինք վերադառնալ. օ՛, եթե եղավ, ի՞նչ լավ կլինի...» (Իսահակյան բ, 2020: 195-198):

Զարմանալի արգասաբեր եղավ Թուրքիայում ապրած շրջանում անցած Իսահակյան ստեղծագործողի ճամփան: Մենք կուզենալինք անցնել այդ ճամփան, արարման անհուն տենչով տոգորված այդ ճամփան՝ հիշատակելով վտարանդի բանաստեղծի նոր գործերը և նրանց գրման հանգամանքները:

Երկու գողտրիկ բանաստեղծությունների ևս հիմք է տալիս ծո-

վի փոթորկահույզ կերպարը.

«Փրփուր բաշերով ծովը ամեհի...» բանաստեղծությունից կես տարի անց գրվում է «Մեղմիկ քայլում է երեկոն քնքուշ...» քնարական էությունը՝ Պրինկիպո (Իշխանաց կղզիներ) գեղեցկագույն վայրում:

Գրողական կյանքը շատ անպաճույճ է՝ թուղթ, գրիչ, մի հանգիստ անկյուն և Պրինկիպո կղզին կամ Իզմիթի՝ Նիկոմեդիայի գեղատեսիլ ափը, գեղեցիկի ու հավերժի տրամադրությամբ ներշնչում էին տարագիր Իսահակյանին: Եվ հոգեկան տվայտանքները փոխվում էին ստեղծագործական դեգերումների: Այս իմաստով հատկանշական եղան տարագրության այդ շրջանի համարյա բոլոր ամիսները. ինքնամոռաց աշխատանքի արդյունքում նա ավարտեց «Ուստա Կարո» վեպի առաջին տարբերակը, վերջնականապես խմբագրեց և տպագրության հանձնեց «Աբու-Լալա Մահարի» պոեմը, գրեց մեկ տասնյակ բանաստեղծություններ, բազում ժանրերում կերտեց նոր գործեր՝ պատմվածքներ, հեքիաթներ, առակներ և այլն:

Ահա դիտում ենք 1911 թվականի հոկտեմբեր ամիսը. երեք բանաստեղծություն, «Սիրո վեպը» արձակ բալլադը, «Մանկությունը» հեքիաթը և նույնիսկ մեկ գրախոսություն՝ «Մաննիկ Պերպերյան «Արձակ երգեր»»: Հարկ է ասել, որ Մաննիկ Պերպերյանը երիտասարդ, շատ գեղեցիկ կին էր, առաջադեմ հայացքների տեր, և անմիջապես գրավել է Իսահակյանի ուշադրությունը: Իսկ Իսահակյանի հետ նրան ծանոթացրել էր բանաստեղծ Սիամանթոն: Դա 1911 թվի ամռանն էր: Երիտասարդ գրագիտուհին՝ Մաննիկ Պերպերյանը, նոր էր հրատարակել իր «Արձակ երգեր» գրքույկը և նվիրել Իսահակյանին: Տվյալ գրքույկն Իսահակյանի համար անակնկալ էր: Քանզի հայ իրականության մեջ քիչ էին արձակ գրող հայ կանայք, այն էլ՝ Կ.Պոլսում: Իսահակյանը սիրով կարդում է այն և բավական արագ գրում իր գրախոսականը, որը Պոլսից ուղարկում է Թիֆլիս՝ «Հորիզոն» օրաթերթի խմբագրությանը: Այն շուտով տպագրվում է «Հորիզոն», 1911 թ., N244, նոյեմբերի 4-ի համարում՝ Ավ. Պայազատյան ստորագրությամբ:

Իհարկե, գրախոսությունն առաջին հերթին հետաքրքիր էր Իսահակյանի՝ ժամանակակից թուրքահայ գրականությանը տրված մի շարք դիպուկ, ճիշտ և համարձակ գնահատականներով. «Ամենից

առաջ ուշագրավն է օրիորդի ոճը, որ չափազանց ինքնուրույն է և եզակի թուրքահայ բանաստեղծների մեջ: Թուրքաց գրողները մի անբուժելի ցավ ունին՝ խրթին, մութ, մանվածապատ գրելու ձև: Նրանց կարծիքով որքան ոճը արվեստական լինի, սեթևեթ և դժվար հասկանալի, այնքան վեհ ու գեղեցիկ կլինի: Մի փոքր զգացմունք, մի չնչին միտք պաճուճում են ամպագոռոռ և բրածո բառերով, խճողում են ու մթագնում, գործ են դնում բազմաթիվ ածականներ, հոմանիշներով խեղդում մարդուն և միևնույն միտքը տարբեր ձևերով անվերջ կրկնում: Սակայն օր. Մ. Պերպերյանը, բարեբախտաբար, միանգամայն ազատ է գեղարվեստի այսպիսի սպանիչ ըմբռնումից. նրա ոճը պարզ է, հստակ, միամիտ և սրտաբուխ, ասես մի խելացի մանուկ է խոսողը, որ հասարակ սրտի լեզվով պատմում է մտերմին՝ իր սիրածին, իր զգացմունքները, սերն ու վիշտը» (Իսահակյան ա, 2020: 198):

Ըստ ամենայնի, ինչպես երևում է թե՛ գիրքը, թե՛ նրա երիտասարդ հեղինակի խառնվածքը հետաքրքրել էր բանաստեղծին, գրավել նրա ուշադրությունը: Եվ նա իր գրախոսականում անում է մի շարք դատողություններ կնոջ կերպարի առեղծվածի մասին. «...Բոլոր կին բանաստեղծները երբեք խոր սեր չեն զգացել և, բնականաբար, չեն արտահայտել: Դանթեի, Պետրարկայի, Բայրոնի, Հայնեի և կամ Լերմոնտովի սերն՝ իր վշտերով ու կարոտներով, ոչ մի կին չի զգացել: ...Ամեն մի կին՝ մեծ թե փոքր հոգով. ունի դեմոնական մի հատկություն՝ տանջելու, չարչարելու իրեն սիրողին...» (Իսահակյան ա, 2020: 199): Այս վերջին խոսքերը Իսահակյանը կարծես շարադրել է մարգարեական հեռատեսությամբ: Հենց Սիամանթոյի հանդեպ տաժած Մաննիկի սիրո տատանումները, անորոշությունը վերջնական պատճառ դարձան, որ Մաննիկի կանչով, եղերական 1915 թվականի գարնանը, Սիամանթոն, չլսելով Իսահակյանի հորդորները, Ժնևից մեկնեց Կ.Պոլիս՝ ընդառաջ իր ողբերգական ճակատագրին:

Բանաստեղծություններից գատ՝ զգալի անդրադարձ է ունենում Իսահակյանն այդ շրջանում արձակի ժանրերին, ինչը վկայում է նրա գրողական հետաքրքրությունների լայն շրջանակի մասին: Այսպես, Կ. Պոլսում վերամշակում է, բազմաթիվ հեղինակային ուղղումներով իր գողտրիկ «Սիրո վեպը» հեքիաթ-լեգենդը:

Այնուհետև նորեն բանաստեղծական կանչեր հայրենի եզրից «Ամեն գարունքին՝/Արագիլն ուրախ կիջներ մեր ծառին...», գրված ծովափնյա ամառանոցային Իզմիր քաղաքում, տպագրվում է առաջին անգամ «Բագին» («Ազատամարտ» օրաթերթի հավելված), Կ. Պոլիս, 1911 թ., դեկտեմբերի 22)՝ «Ամեն գարունքին վառ ծաղկունանց հետ...» սկսվածքով, ստորագրությամբ՝ Ավ. Իս:

Իսկ հաջորդ՝ արդեն նոր 1912 թվականին գրած «Մանկությունը» արձակ պոեմն առաջին անգամ տպագրվում է Կ. Պոլիս («Ազատամարտ», 1912, մարտի 11):

Նույն բնույթի՝ նույնպես 1911 թ. դեկտեմբերին՝ Կ. Պոլսում գրված բանաստեղծական կարոտաբաղձ վերհուշը՝ «Հայրենի գետի զմրուխտ ափերին...»:

Եվ բնական է, որ երիտասարդ Իսահակյանի հոգում պիտի ծագեին նման անմիջական զգացումները՝ զմրուխտ գույներում մնացած հայրենի եզրի հանդեպ: Թե՛ Կ. Պոլսում, թե՛ Իզմիր գեղատեսիլ փոքր քաղաքում Իսահակյանը հետևողականորեն աշխատել է: Եվ կրկին անդրադարձ արձակին, հայ բանահյուսության գանձարանից վերցված «Քաջ Նազար» հեքիաթին, որի իր հեղինակային տարբերակը՝ «Աղա Նազար» վերնագրով, Իսահակյանը գրեց 1911 թ. դեկտեմբերի 22, Իզմիրում և առաջին անգամ տպագրեց «Ազատամարտ» օրաթերթում՝ 1912 թ. հունվարյան երեք համարներում (ամսի 15-ին, 17-ին և 18-ին): Ապա մասնակի փոփոխություններով հրատարակեց առանձին գրքով՝ «Աղա Նազար» հեքիաթ, Կ. Պոլիս, 1912 թ., 22 էջ²:

Ստեղծագործական տարերքը եղել է այն կարևոր նախադրյալը, որ եռանդ է հաղորդել Իսահակյանին, ուժ՝ դիմակայելու վտարանդի կյանքի դժվարություններին: Իմաստ է տվել. չէ՞ որ մենք գործ ունենք գրող, ստեղծագործող մարդու կյանքի պատմության հետ: Զմայլված Մարմարայի գեղեցկությամբ, Այա-Սոֆյայի վեհությամբ, հիշատակած հեքիաթային իշխանաց (Պրինկիպո) կղզիներով, սա-

² Հարկ է ասել, որ այդ երկի մասին գրականագետ և հայագետ Դավիթ Անանունը հետաքրքիր հոդված գրեց «Աղա Նազար» հեքիաթ, (Կ. Պոլիս, 1912 թ.) վերնագրով, որը տպագրվեց «Բաքվի ձայն» թերթում, 1913, 9 հոկտեմբերի:

կայն բոլոր դեպքերում Իսահակյանի համար առաջնայինը, էականը ստեղծագործական տարերքն էր, գրողական իր աշխատանքը...

Նոր տարին օտարության մեջ՝ 1912 թվականը նշանավորվեց ևս նոր գործերով: Հենց հունվար ամսին Իզմիրում նա գրում է Արևելքին հարիր մի գլուխգործոց: Ապրված, զգացված, գունեղ և եզակի.

*Քո ունքերդ, իմ սիրեկան,
Կեռ են դահճի թրի նման:*

*Աշխարհը՝ սուտ երազ ու սին,
Թող որ խմեմ, իմ սիրեկան
Շրթունքներիդ կարմիր գինին,
Գլուխս զարկ դահճի նման...*

*Քո ունքերդ, իմ սիրեկան,
Կեռ են դահճի թրի նման:*

1912 հունվարի 25, Իզմիր
(Իսահակյան, 2003: 393)³:

Արևելքում գրվում է Արևելքին հարիր...

Կ. Պոլսում Իսահակյանի գրած նոր գործերը

Ըստ ամենայնի, ազատված կայսերական ոստիկանության ամենօրյա հետապնդումներից, նա շատ արդյունավետ աշխատել է: Բոլորովին վերջերս մեր ձեռքն ընկավ Իզմիրում արված գրառումների մի փոքր տրցակ, չորս էջ, որ Իսահակյանը վերնագրել է. «Դասագրքի համար» և դրել ամսաթիվը. «1912 թիվ, 5 հունվարի, Իզմիր»:

Այսինքն՝ Թուրքիայում լինելու իր վեցերորդ ամսին: Քանզի այդ գրառումներն ամբողջովին անտիպ են, կուզենայինք այն ամբողջությամբ ներկայացնել որպես գրողական աշխատանքի հետաքրքիր նմուշ, որպես մի խոսող վկայություն՝ Իզմիրում արվածի:

Ահա իզմիրյան այդ գրառումների առաջին էջը, Իսահակյանն սկզբում թվարկում է «Դասագրքի» համար արդեն գրված գործերը,

³ Այս բանաստեղծությունն առաջին անգամ տպագրվում է «Ոստան» (եռամսյա պարբերական), Կ. Պոլիս, 1912, N5, էջ 27:

իսկ հետո՝ այն գրվելիք գործերը, որ ինքը ծրագրում է նոր դասագրքի համար՝

ԳՐԱԾ ԿԱ.

1. Ահասֆերը
2. Բուդդիա
3. Եղնիկը
4. Խեղճ մայրը (ոտանավոր)
5. Մոլլան ու երեխաները (ոտանավոր)
6. Երջանիկ տունը
7. Արագածի որսորդը
8. Մեր արագիլը
9. Աղա Նազար
10. Ահմեդի ուղտը
11. Հորս գութանը

ԳՐԵԼԻՔ ՆՅՈՒԹԵՐ.

1. Ահմեդի ուղտը
2. Որսորդների պատմությունները
3. Գարոյի հոր ձին
4. Շմավոնի-Գաֆանի պատմած՝ մայրը
5. Սև ծովի մայրը (խորտակվող նավը, մայրը մտնում է երեխան բերելու և էլ ետ չի դառնում, ծծի երեխան, այնինչ ինքը ազատվել կարող էր)

6. Վայոց ձորի հովիվը (Ուստա Կարո)
7. Որն է մեծը (Ով է մեծը), (Ուստա Կարո)
8. Հորս գութանը (Մելոյանի պատմածը)
9. Գողը, որ երեխան գիշերը (սինեմայի դեպքը)
10. Երկու որմնադիրները (Ես կմեռնեմ, չէ, ես ...)
11. Աշակերտի օրագիրը
12. Ոսկի քաղաքը (Ուստա Կարո)
13. Ստվերը ծախած մարդը
14. Խելոք դատավորը
15. Ստախոս պարսիկն ու ստախոս տաճիկ ()

Խոսքն այստեղ, իհարկե, ընդարձակ ծրագրի մասին է, հիշատակվում են և՛ գրված գործերը, և՛ նորերը, որ մոտ ապագայում պիտի գրվեն: Օրինակ. «Մեր արագիլը» նա գրել է 1912 թ. հունվարի 5-ին, Իզմիրում: Այն «Ազավոր արագիլը» վերնագրով տպագրվել է «Դասընկեր» Դ. տարի գրքում (Երևան, 1917 թ., էջ 155-157): Նույնպես և նույն օրը՝ հունվարի 5-ին, Իզմիրում գրել է «Ահմեդի ուղտը» առակը (որը տպագրվել է «Դասընկեր» դասագրքում Գ տարի, Ե., 1916 թ.): Իսկ «Ոսկի քաղաքը» լեգենդը գրված է 1912 թ. Իզմիրում, առաջին անգամ տպագրվում է «Բյուրանիա» օրաթերթում, Կ.Պոլսում, 1913 թ., հունվար, №23:

«Բուդդիան» լեգենդը տպագրվել է «Ազատամարտ» շաբաթաթերթում, Կ. Պոլիս, 1911 թ., Նոյեմբերի 21, № 9: Իսկ «Խեղճ մայրը» (ոտանավոր) դա հայտնի «Մայրը» («Շիրակի ավանդավեպ») լեգենդն է:

«Աղա Նազար» քաջածանոթ հեքիաթը նույնպես գրվել է Իզմիրում 1911 թ. դեկտեմբերի 22-ին: Իսկ «Արագածի որսորդը» (արձակ ավանդություն), ըստ ինքնագրի՝ գրված է 1912 թ., հունվարի 5-ին Իզմիրում՝ «Դասընկերի» համար նախատեսված տետրի նյութերում, սակայն մնացել է անտիպ, և առաջին անգամ այն հրատարակել է տողերիս հեղինակը (Իսահակյան, 2014: 441):

Ընդհանուր առմամբ՝ «Գրելիք նյութեր»-ի ցանկից հայտնի են «Հորս գութանը», «Ահմեդի ուղտը» և «Ոսկի քաղաքը», մնացյալ ծրագրված նյութերի ճակատագիրը մեզ հայտնի չէ:

Մեր ուսումնասիրած տրցակում կա ևս մի շատ զվարճալի անտիպ առակ՝ դպրոցական մանուկների համար, որը պայմանականորեն մենք կանվանենք «Թռչունների հարսանիքը»՝ գրված, ըստ ամենայնի, ևս Իզմիրում 1912 թվականի սկզբին:

Թռչուններն մի օր հարսանիք սարքեցին:

Հարսանքատներն էին ուրուրն ու ցին:

Հարսանքատներն էր կանաչ անտառը,

Աթոռն ու սեղան՝ ծառն ու մացառը:

Աքլորն էլ փեսան՝ կարմիր գլխարկով

Եվ կոշիկները՝ սուր խթաններով:

*Նազելի հարսն էր համեստ մարին՝
Ճերմակ մեղաքսե զգեստներ հագին...*

Սակայն այս գործը ժամանակին Իսահակյանը չի տպագրել և այն մնացել է անտիպների շարքում մինչև օրս: Գրված է շատ վառ, անթաքույց հումորով: Իսահակյանը փորձել է մանուկ ընթերցողին ծանոթացնել հայոց ֆաունայի բազմազան ներկայացուցիչների հետ՝ շեշտելով յուրաքանչյուրի անունը և տալով նրանց զվարթ ու հակիրճ բնութագրերը:

Հաջորդ գործը իր բնույթով նույնպես մանուկների համար է, առակ-շուտասելիք: Ազգային բանահյուսության որոշակի ավանդներով գրված.

*Աղան ուղարկեց մշակին,
Որ երթա արտը քաղե.
Նա էլ պատկեց ծառի տակին,
Ով ուզե, թող գա՛ քաղե...*

Հաջորդ գրառումներն այդ տրցակի պոլսահայ բնական կերպարներ ներկայացնող զվարճալի մանրանկարներ են, շատ բնորոշ այդ քաղաքի բարքերին, որ իրենց երկերում հաճախ պատկերել են թե՛ Պարոնյանը, թե՛ Օտյանը: Եվ Իսահակյանը հումորով լի գրի է առնում դրանք գրողական լաբորատորիայի համար:

ԽՈՃԱՅԻ (ԿԱՐԱՊԵՏ ՉՈՐՊԱՃՅԱՆԻ) ՉԱՄՈՒՄՆԱՆԱԼՈՒ
ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Թիվ

1. Ես ուզեցի, ան չուզեց (աղջիկը).
2. Ան ուզեց, ես չուզեցի:
3. Ես ուզեցի, ան ուզեց, մերոնք չուզեցին:
4. Ես ուզեցի, ան ուզեց, անոնք չուզեցին:
5. Անոնք ուզեցին, մերոնք ուզեցին, ան չուզեց:
6. Անոնք ուզեցին, մերոնք ուզեցին, ես չուզեցի:
7. Ան ուզեց, ես ուզեցի, անոնք ուզեցին, մենք ուզեցինք, աս ա-
նիրավ պատերազմը բոթեց (պայթեց), ես փախա՝ ասկյար բանակ

չգնալու համար. փախուստը դարձավ անվերադարձ, ան տեղահանվեց, ետքը իմացա, որ ուրիշին է ամուսնացել:

ՕՆՆԻԿ ԲԵՅ ՉԱՅԱՆԻ ՔՐՈՋ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՓԵՍԱՅՈՒՆ

Թիվ

1. Պետք է լինի երիտասարդ
2. Գեղեցիկ
3. Հարուստ
4. Ազնվատոհմ
5. Բարձրագույն կրթությամբ
6. Դիրք ունեցող, պոզիցիոն
7. Ներկայանալիք (սալոնական)

8. Լեզուներ գիտցող

9. Շնորհալի, պարող, երգող, նվագող և ուրիշ կարգ մը հատկություններ:

Ուշագրավ է նկատել, որ 1912 թվականին էլ, ինչպես 1911 թվականին, Իսահակյանը դիմել է արձակին՝ նոր ինքնատիպ խոսք ասելու՝ համարելով, որ արձակ պատումն ունի իր ներքին, խոր հնարավորությունը՝ խոսելու ընթերցողի հետ: Այդ տեսակետից կատարյալ գլուխգործոց է Իսահակյանի «Հորս գութանը» պատմվածքը, գրված 1912 թվին՝ հունվարի 25-ին, «Սգավոր արագիլը» նովելը:

Բնության խենթ գեղեցկության ևս մի պատկեր է դրվագում Իսահակյանը Իզմիրում, 1912 թ. հունվարի 25-ին «Ծովը փոթորկի առջև...» արձակ բանաստեղծությունը, որը գրված է եղել նույն ինքնագրի հակառակ երեսին, ինչ «Քո ունքերդ, իմ սիրելեան...» բանաստեղծությունը, բայց մնացել էր անտիպ (ինքնագիրը տե՛ս ԳԱԹ, ԱԻՖ, 156-II):

Չնայած «Մեղմիկ քայլում է երեկոն քնքուշ...» բանաստեղծության մեջ Իսահակյանը տրտնջում է «Բախտը ձգել է ինձ օտար հեռուն...», սակայն պոետի ինտենսիվ ստեղծագործական գործունեությունը վկայում է, որ այդ «բախտը» ի զորու չի եղել ընկճել բանաստեղծին:

Գեղարվեստական գործերին զուգընթաց՝ նա Կ.Պոլսում գրում է հայրենասիրական բնույթի իր լավագույն ընդվզումներից մեկը, խոսքը հայ ազգային-ազատագրական շարժման կարկառուն գործիչ, իսկ 1905-1911 թթ. Իրանական հեղափոխության գլխավոր դերակատարներից մեկի՝ Եփրեմ Խան Դավթյանի հիշատակին գրված «Հեռորոն» (Եփրեմ) ներբողի մասին է (1912 թ., մայիսի 6): Այն առաջին անգամ տպագրվել է «Ազատամարտ», օրաթերթում, Կ.Պոլիս, 1912 թ. մայիսի 11-ին (թիվ. 893):

Եփրեմ Դավթյանի նման հերոսի մասին գրելը, նրան մեծարելը մի օտար երկրում, ուր կասեցվում էին հայ ազգային ոգով ստեղծված երկերը, և հեղինակն էլ ինքը քաղաքական վտարանդի էր, անշուշտ, քաջություն էր: Բայց դա չէր կարևորը, Իսահակյանը պիտի իր խոսքն ասեր, պիտի արժանին մատուցեր մեծ հայորդուն: Հրաշալի է արդեն ներբողի սկիզբը. «Նրա ծննդավայրը Արցախ-Սյունյաց աշխարհն է. քաջերի այդ օրրանը, որ միշտ բարձրագլուխ է եղել համատարած ստրկության մեջ, այդ անմատույց լեռներն ու դժար կապանները, ուր թափառում է Դավիթ Բեկի ոգին»:

Այն բացառիկ ինքնագրերից, որ Իսահակյանը հետը վերցրել էր հայ-թուրքական սահմանն անցնելիս իր փոքրիկ պայուսակի մեջ, պետք է հիշատակել «Աբու-Լալա Մահարի» պոեմի ինքնագիրը և «Ուստա Կարո» վեպի առաջին տարբերակի ձեռագիրը, որը պիտի ավարտեր Իզմիթում 1912 թվին: «Ուստա Կարո» վեպի առաջին տարբերակի վերջին էջում Իսահակյանը արել է հետևյալ գրառումը.

«Վերջացավ 19-ին հունվարի, գիշերվա ժամը 2 ½ Իզմիթ, 1912 թվին»:

Վեպի առաջին տարբերակը կազմեց մեկ միասնական ինքնագիր՝ 356 մեծադիր էջ: (Ներկայումս այդ ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, N295-II, էջ 356):

Վեպի առաջին տարբերակի շուրջ արված աշխատանքը բավական հստակ երևում է Վիկտորիա Աբովյանին Թուրքիայից գրած բանաստեղծի մի շարք նամակներից. <1911, 24 նոյեմբերի, Կ.Պոլիս> «Մոտ օրերս գնում եմ անպատճառ մի գյուղաքաղաք, ուր կա հայկա-

կան մի նշանավոր գիտական վանք⁴. մի ամիս կամ գուցե 2 ամիս պիտի մնամ և վերջնականապես «Ուստա Կարոն» ավարտեմ. այստեղ՝ Պոլսում, չի կարելի մեծ աշխատանքներ անել. ջղային-նևրոզ միջավայր է. մանր-մունր միայն կարելի է գրել, իսկ մեծ գործի համար հարկավոր է անդորր միջավայր և անխանգար զբաղմունք – պարապմունք:

«Ուստա Կարոն» վերջացնելուց հետո պիտի գնամ արտասահման՝ Վիեննա, մի տարով համալսարանում լսելու... «Ուստա Կարոն» ինչպես երևում է շա՛տ լավ բան է դուրս գալու. այս 4 ամիս ճանապարհին և այստեղ. բավական մշակեցի և խորհեցի: Ձեռքիս տակ գրելիք շա՛տ բան ունիմ, իմ հոգումս – շա՛տ նյութ կա» (Իսահակյան Բ, 2020: 193):

<1912, 24 ապրիլի, Պրինկիպո, Պոլիս> «Ձմեռս մի երկու ամսով Պոլսից հեռու ապրեցա Իզմիր քաղաքում (ուր գնացել էի առանձին աշխատելու և համարյա վերջացրի «Ուստա Կարոն», հենց լուսամուտիցս միշտ երևում էր գիշերը մինչև շա՛տ ուշ՝ ժամը 3-ը՝ այդ Արջը, որի անունը որքան որ անբանաստեղծական է, իսկ հուշերը լիքը հոգեկան կախարդանքով... Աշխատում եմ և մի ուրիշ երկու լավ նյութերի վրա: «Ուստա Կարոն» վերջացած է, բայց մի 2-3 ամսվա աշխատանք է պետք, որ լեզուն ուղղեմ, հղկեմ, կոկեմ, երբ որ ձեռքս մի քիչ փող անցնի, որ մի քանի ամիս ապահով լինեմ, «Ուստա Կարոն» լույս աշխարհ կելնի » (Իսահակյան Բ, 2020: 195, 198):

«Աբու-Լալա Մահարի» պոեմի առաջին հրատարակությունը

Ինչպես մենք նկատել էինք, 1911 թ. Կովկասից դուրս գալու բանաստեղծի ուղևորական ճամպուկում ընդամենը երկու ինքնագրեր կային՝ «Ուստա Կարո» վեպի (մեծադիր էջերով) ինքնագիրը և «Աբու-Լալա Մահարի» պոեմի ավարտված ձեռագիրը: Պոեմն ամբողջովին ավարտված էր, ինչպես վկայում է ինքնագրային գրառումը՝ 1910 թ. ապրիլի 4-ին, Ղազարապատում: Այնպես որ, «Աբու-Լալայի» վրա այլևս անելիք չկար, մնում էր տպագրել առանձին գրքով: Եվ ի տար-

⁴ Իսահակյանը նկատի ունի հայկական Արմաշ գյուղի Ս. Աստվածածին վանքի դպրեվանքը (1889-1915), որը ստեղծվել է որպես Կ. Պոլսի պատրիարքարանի հոգևոր բարձրագույն ուսումնական հաստատություն:

բերություն ցարական Ռուսաստանի, Ետհամիդյան Թուրքիայում, այդ անցումային շրջանում հայ մամուլի, հայ գրքի տպագրությունը բավական մեղմացել էր։ Որոշակի դեպքերի բերումով 1910 թ. վերջերին թիֆլիսյան գրահրատարակիչ Գալուստ Գալստյանի հրավերով Թիֆլիս էր եկել պոլսահայ պատմավիպագիր Սմբատ Բյուրատի որդին, երիտասարդ հրատարակիչ Վաղինակ Բյուրատը։ Այդ ժամանակաշրջանում նա ծանոթանում է Իսահակյանի և Թումանյանի հետ, և խոստանում է Իսահակյանին, որ Կ. Պոլսում իր սեփական տպարանում կհրատարակի «Աբու-Լալա Մահարի» պոեմը։ Եվ մի որոշ ժամանակ անց, արդեն Կ. Պոլսում նա պետք է լիներ այն առանցքային անձանցից մեկը, որ պետք է առաջինը հրատարակեր Իսահակյանի նշանավոր պոեմը։ Ինչպես է դա եղել՝ մենք տեղյակ ենք լինում տարիներ անց՝ 1961 թվին, հենց Վաղինակ Բյուրատի գրած հուշերից⁵։

«1911 թվի ամռանը մեր անմահ և սիրելի Վարպետ Ավ. Իսահակյանը գալիս է Պոլիս, նրա հետ էր նաև Հայաստանի անմահ սոխակը՝ Կոմիտաս Վարդապետը։ Հայրս սիրով հյուրընկալեց մեծանուն հյուրերին իր ամառանոցում, Կ. Պոլսի արվարձան Հալլճ Օղլու հայկական գյուղում Ալբուն Տյուրու ամիրայի փայտաշեն վիլան, որը շրջապատված էր ընդարձակ մի անտառակով։ Վարպետն ու Կոմիտաս հորս մոտ մնացին տասնեն հինգ օր, տեղափոխվեցին մի հարմար բնակարան։ Ես անմիջապես գնացի և ուրախությամբ հայտնեցի, խոստումը հարգած լինելուն։ Խոսք բացվեց, թե ինչ է լինելու «Աբու-Լալա Մահարին»։ Խոստումն հարգեցի և գործի լծվեցի անմիջապես։ Ես ինքս շարել եմ մանրատառ այս գլուխգործոցը, առանց վստահելու գրաշարներիս, որոնք դժվարանում էին շարել արևելահայ լեզվով գործեր։ Վարպետի խանդավառությունը մեծ եղավ, երբ մի ամիս վերջ անակնկալ եղավ, երբ նրա ձեռքը մի ծրարիկ դրի փաթեթված, որի մեջ քսան օսմանյան ոսկե դրամի պատկառելի մի գումար կար։ Վարպետը ապշած մնաց՝ դիտելով 20 դեղին ոսկիները։

-Տո Սմբատիս որդի, ոնց թե այսքան գումար ինձ հասնում է,

⁵ Տպագրվել է «Բազմավեպ», Վենետիկ, 1965, թիւ 4-7, էջ 93-99, «Էջեր Վաղինակ Բիւրատի հուշերէն (Վարուժանի, Իսահակեանի, Կոմիտասի և Երեւանի մասին)»։

ասաց:

-Իմ թանկագին Վարպետ, Ձեր գործը ես ինքս շարել եմ, միայն թղթի ծաղք եղավ, քանի որ տպագրական մեքենան իմ սեփականությունն է. երկու հազար օրինակ եմ տպագրել, գրեթե սպառել է: Ձեր արդար իրավունքը վերցրեք 1000 օրինակների արժեքը:

Այսպես Կ.Պոլսի հայության համար մի անակնկալ եղավ «Աբու-Լալայի» երևումը:

1911 թվի աշնանային մի գեղածիծաղ ուրբաթ, հայրս հրավիրում է Վարպետին և անմահ Կոմիտասին գնալու Կ. Պոլսի ասիական եզերքում Պեյքոզ փաշա (խաշ) ճաշակելու ալբանացի համբավավոր փաշաճի Հասան պապայի մոտ: Չորսիս ուրախությունը կատարյալ էր: Կոմիտաս գեղգեղ ծայնով մի քանի հուզիչ երգեր երգեց...»:

Ահա այսպես, յուրովի իր պատմությամբ Վաղինակ Բյուրատը ներկայացնում է Իսահակյանի «Աբու-Լալայի» առաջին տպագրության պատմությունը:

Ահա այդպես է տպագրվել հայրենի երկրից հեռու Իսահակյանի գլուխգործոցը. «Աբու-Լալա Մահարի» [Քասիդ], (մատենաշար Ազդակ, թիվ 7), Հրատարակություն Արծիվ ժողովրդական գրավաճառանոցի, Կ. Պոլիս, 1911, 27 էջ: Պոեմի առաջին էջում՝ անմիջապես «Աբու-Լալա Մահարի» վերնագրի տակ, Իսահակյանը գրել էր. (Արաբ բանաստեղծ X-XI դարում): Այնուհետև պոեմի նախերգն էր: Առաջին տպագիր տեքստը կազմված էր յոթ սուրահից, վերջին սուրահը ըստ էության կար, սակայն որպես յոթերորդ սուրահ, այլ ոչ թե վերջին սուրահ վերնագրով: Պոեմն ամբողջությամբ կազմում էր 365 տող: Առաջին տպագրության վերջին՝ 27-րդ էջում զետեղված էին նաև Իսահակյանի կազմած ծանոթագրությունները, ուր տրված էին թվով 13 արաբական բառերի հայերեն հակիրճ թարգմանությունները:

Առաջին հրատարակության վեցերորդ սուրահում Արևին ուղղված Աբու-Լալայի խոսքերում ուղղակի տրվում է Հին Պարսկաստանի մարգարեներից Չորոաստրի (Չրադաշտի – Заратустра) անունը⁶.

Դու՛, որ հիացքով և անմահությամբ լցրեցիր հոգին մեծ Չո-

⁶ Նիցշեի սիրելի դիցաբանական կերպարը, հիշենք նրա «Այսպես էր խոսում Չրադաշտը» խոհական տրակտատի հերոսին:

րոասպրի,

Ահա՛ իմ հոգին – մի ծարավ բողբոջ, թափի՛ր նրա մեջ քո պուր-պուր գինին:

Իսկ արդեն պոեմի հաջորդ հրատարակություններում Իսահակյանը չի հիշատակում պարսից մարգարեի՝ Զորոաստրի անունը:

Ինչևիցե, հենց իր առաջին տարագրության մեջ՝ Կ. Պոլսում, իրականացավ «Աբու-Լալա Մահարի» պոեմի առաջին հրատարակությունը: Հետագայում նույն այդ քաղաքում այդ պոեմը չորս անգամ ևս տպագրվեց. 1918 թ., 1920 թ., 1926 թ. և 1938 թ.: Ապա և հրատարակվեցին առաջին գրախոսությունները այդ գրքի վերաբերյալ. Ռ. Զարդարյան. «Աբու-Լալա Մահարի». պոեմի գեղարվեստական արժեքի մասին՝ «Ազատամարտ» շաբաթաթերթի հավելված, Կ. Պոլիս, 1911, N 34, էջ 529-530: Ե. Ֆրանգյան, «Ավետիք Իսահակյանը որպես մտածող», - «Գեղարվեստ», Թիֆլիս, 1911, N4, էջ 141-147, Դ. Տեր-Դ., «Աբու-Լալա Մահարի» (Կ. Պոլիս, 111), «Մեր ուղին» ժողովածուում, Բաքու, 1912: Վայ-Վարունա, «Աբու-Լալա Մահարի», «Հայրենիք», Բոստոն, 1912, 9 հունվարի:

Շատ համառոտ են տեղեկությունները Իսահակյանի Կ. Պոլիս, Իզմիր քաղաքներում ապրած ժամանակաշրջանի վերաբերյալ: Բնականաբար նա հանդիպումներ էր ունեցել այնտեղ ապրող արևմտահայ գրողների, մտավորականների հետ՝ Սիամանթոյի, Վարուժանի, Ռ. Սևակի, Զոհրապի, և իհարկե Կոմիտասի հետ: 1910-ական թթ. Իսահակյանը դեռ բավական երիտասարդ էր, և այդ տարիքում հուշեր չեն գրում: Հուշերին նա անդրադարձավ ավելի ուշ շրջանում: Կոմիտասի մասին գրված իր հուշերում հիշատակում չկա պոլսյան շրջանի մասին: Մի քանի հակիրճ գրառումներ կան. «Կոմիտասի հետ՝ Կ. Պոլսում: Հարցնել Փանոսին նրա մասին: Կոմիտաս. աննկուն, անխոնջ աշխատող. խոչընդոտներ և արգելքներ հաղթահարող: Անսպառ եռանդ. տիտանական աշխատանք՝ հազարավոր երգեր հավաքել, ուսումնասիրել, վերլուծել: Գիշերներ լուսացնել, դիմանալ միայն ներվերի լարվածքով: Անձնվեր, բոլորանվեր աշխատանք, տարվել, հանձնվել աշխատանքին, տոգորվել նրանով: Հեռանալով իրականությունից, կյանքի վայելքներից՝ ապրել ճգնավորի պես՝ ինք-

նամոռաց, աշխարհամոռաց: Իրականությունը ժխտել և ապրել իր երազանքի, իր աշխատանքի, իր ստեղծագործության իրականության մեջ, իր ուղեղի մեջ, ձայների աշխարհի մեջ: Հանճարի հատկությունն է դա. հափշտակվել իր գյուտով, գործով, իր ստեղծած մթնոլորտով, իր աշխարհով:

...Եղել ենք միասին Եվրոպայում, Ստամբուլում. բայց այս ամենը թվում է ինձ ո՛չ իրական: Կոմիտասը ինձ համար հիմա լեգենդ է. հեռավոր առասպել, և նրա կյանքն ու փառապանծ գործը մի չքնաղ հրաշապատում» (Իսահակյան ա, 2020: 121, 116):

Հափշտակված ստեղծագործական աշխատանքով, ամենօրյա գրողական գործերով Իսահակյանը հիրավի երկրորդական էր համարում ճամփորդելը երկրով, հիանալը զարմանալի գեղեցիկ դիրք ունեցող Կ. Պոլսի հրաշալիքներով, գեղատեսիլ վայրերով, իհարկե, այդ ամեն ինչը նրա աչքի առջև էր, սակայն նա զուսպ է արտահայտվել: Բացառություն էր կազմում, սակայն, ճարտարապետական մի կոթող, որը մշտապես առաջ է բերել նրա հիացմունքն ու զարմանքը: Խոսքը Կ. Պոլսում խոյացած վաղ քրիստոնեության ամենակատարյալ տաճարներից մեկի՝ Այա-Սոֆիա (Սուրբ Իմաստություն – հունարեն) տաճարի մասին է՝ կառուցված տակավին 6-րդ դարում՝ որպես քրիստոնեական ուղղափառ եկեղեցու Մայր Տաճար: Հետագայում՝ օսմանյան բռնակալության օրոք, այն փորձել են վերափոխել մզկիթի: Հենց այդ տաճարի մասին է Իսահակյանը հիացած գրում Վիկտորիա Աբովյանին. <1912, 24 ապրիլի, Պրինկիպո> «Սա Բոսփորի այն տեղն է, որ տեղից երևում է Այա-Սոֆիան: Երեք մզկիթ է երևում. միջինը, մեծ, դեղին գույնով – դա է Այա-Սոֆիան (Սուրբ Սոֆիան). իսկապես գեղարվեստական մի հրաշք. արտաքինը – ոչինչ. հրաշքը ներսն է. շենքը VI դարուց է, իհարկե, գիտես: Գեղեցիկ, շա՛տ գեղեցիկ է Պոլիսը. բայց ափսոս որ անպիտան ձեռքերի մեջ է գտնվում: Այսպիսի սքանչելի դիրքով քաղաք չեմ տեսած, և չկա աշխարհի վրա, բայց մարմարների վրա շներ են ապրում...» (Իսահակյան բ, 2020: 200):

Թեև Իսահակյանը Կ. Պոլսում հաճախ տպագրվում էր «Ազատամարտ» օրաթերթում կամ նրա շաբաթաթերթ հավելվածում, «Բազինում» և «Ոստան» ամսագրում, Կ. Պոլսի «Թեոդիկ ամենուն տարե-

ցույցում» 1911 և 1912 թվականներին, Ջմյունիայում՝ «Հայ գրականություն» ամսագրում, «Մեր տարեցույցը» Գ տարի, Կ. Պոլիս, 1912 թ., մասնակցում գրական երեկոյթներին, հավաքներին, հաճախ հանդիպում Կոմիտասի և Սիամանթոյի հետ, սակայն նրա ընկալումը բանաստեղծական արվեստի, համաշխարհային պոեզիայի, ի տարբերություն պոլսահայ գրական-քննադատական շրջանների և նրանց բարձրացրած տեսակետների, նախասիրությունների, ուներ իր անհատական տեսակետը՝ եկող հայ ազգային ակունքներից:

Այս հարցերի վերաբերյալ ամերիկահայ գրաքննադատ Հովհաննես Ավագյանի հետ ունեցած նամակագրական բանավեճի մեջ Իսահակյանը շատ ստույգ արտահայտվում է. (1926, 31 հունվարի, Վենետիկ). «Սիրելի բարեկամ, ասացեք, խնդրեմ, ինչո՞ւ պիտի բանաստեղծ կոչվելու համար հետևել Վերլենին կամ Մալարմեին, Վերհարնին կամ Ալ. Սըմենին, փոխ առնել նրանց ձևերն ու եղանակները և պարծենալ, իսկ ոտնահարել մեկին, երբ նա հետևում է հայ հանճարի դարեվեր ստեղծագործություններին այն հավատով, թե շարունակում է ազգային ինքնատիպ թելը, մեր ինքնուրույն աշխարհագրացումը և աշխարհապատկերացումը: Յուրաքանչյուր ազգ պիտի ունենա իր ուրույն, ինքնահատուկ ոճը. միայն ոճ ունեցող ազգերն են ապրում... Ես վաղ հասակից (18 տարեկան) Եվրոպա եմ եկել ուսանելու, և մի օր չեղավ, որ ոգևորվեի Շարլ Բոդլերի պոեզիայով, որ իրոք ինձ համար «չարության ծաղիկներ» էին: Ինձ համակել են այն բանաստեղծները, որ ազգային, ֆոլկլորի տարրեր են ունեցել – Հ. Հայնե, Գյոթե, Ռոբերտ Բյոռնս:

Երբե՞ք Էդգար Պո, երբեք Մալարմե, ատում եմ նրանց...» (Իսահակյան, 2021: 143-144): Մինչդեռ Կ. Պոլիս եղած շրջանում նա զգում է եվրոպական ժամանակակից պոեզիայի, մանավանդ ֆրանսիական, համատարած ազդեցությունը պոլսահայ գրողների և գրագետների գրվածքների ու ճաշակների վրա: Եվ, իր հերթին, նրանց էլ, մանավանդ պոլսահայ քննադատների համար մի տեսակ օտար էր Իսահակյանը: Անհաղորդ էր նրանց նրա ազգային ակունքներից եկած պոեզիան: Տարված եվրոպական մոդայիկ հողմերով, դեկադանսի (անկումային) երգիչներով, նրանք Իսահակյանին համարում

էին աշուղական, գեղջկական: Այս ամենը շատ լավ էր զգում Իսահակյանը և մտաբերելով այդ շրջանը՝ որոշ ժամանակ անց, նա գրում է իր ընկերոջը, «Հայրենիք» ամսագրի խմբագիր Ռուբեն Դարբինյանին. «Ես առհասարակ ուշք չեմ դարձնում իմ մասին եղած գրախոսականների վրա: Ամենալավ քննադատը ես ինքս եմ իմ գրվածքների մասին: Դրա համար էլ, օրինակ, երբեք ականջ չեմ կախում Օշականի տարիներից ի վեր իմ մասին գրածներին: Նախ և առաջ՝ գիտեմ թրքահայ գրողների փչացած, ֆրանսացած ճաշակը: Գիտեմ Օշականի ամբարտապան բնավորությունը, նրա հատվածական աչառությունը և իմ դեմ ունեցած թշնամությունը, որ վաղուց է, այն օրվանից, երբ Պոլիս էի և քննադատում էի նրանց սիմբոլիզմն ու ֆրանսական գրականության կողոպուտը՝ նրանց մեծ ու փոքր գրողների կողմից:

Ճշմարտությունն այն է, որ եթե ես, Հ. Թումանյանը կամ Հ. Հովհաննիսյանը օգտվում ենք հայ ժողովրդի ոճերից, ձևերից այն մտածումով, թե հայ տոհմիկ գրականություն ենք մշակում, իսկ թրքահայ գրողները նույնն անում են ֆրանսական և օտար գրականություններից: Եթե ժամանակ ունենամ, ցույց կտամ, թե Վարուժանը, Սիամանթոն, Մեծարենցը և մյուսները ինչքա՞ն են կողոպտել Վերհարնին, Վերլենին, Բողլերին, Կարդուչին, Լեոպարդին... Չարժե այդ մասին խոսել: Թո՛ղ հրճվեն, ճաշակի հարց է: Ինձ համար Գյոթեի «Ueber allen Gipfeln ist Ruhe»-ն ամենաթանգ գոհարն է տիեզերական գրականության, դրան չի հասել ողջ ֆրանսական գրականությունը:

...Այստեղ էր Վահան Նավասարդյանը, երեկ գնաց Եգիպտոս, ասում էր, թե Օշականը իր թրքահայ խմբով ատելով ատում է ռուսահայերին և նրանց գրողներին...

Անշուշտ, գլուխ չունեմ նրանց հետ ընկնելու: Բայց սիրտս ցավում է, որ գտնվում եմ այս անպիտան մթնոլորտում, գաղութում, ուր իշխում է այս ստոր մտայնությունը:

Վերջապես, Աստված բոլորիդ բարի տա: Հայությունը երկու ազգից է կազմված՝ իրար ատող, իրար չհասկացող: Սա գալիս է միանգամայն ինձ համոզելու, որ իմ տեղը Արագածի լանջերի վրա է, ինձ ծնող ու ինձ հասկացող ժողովրդի մոտ...» (Իսահակյան, 2021: 97-100):

Գնալով բանաստեղծի անհամատեղելիությունը Կ. Պոլսի հետ ավելի է սաստկանում 1912 թ. ապրիլի 24-ին (արևմտահայ մտավորականների մեծ ջարդից ուղիղ 3 տարի առաջ), և նա անկեղծորեն գրում է. «Ես միայն թուրքին չեմ մեղադրում. հույները նույնպես վատ են... Այստեղ հավաքված 100.000-ներով եվրոպացիք նույնպես վատ են, միջազգային քաղաք դարերի մեջ. չկա մորալ, չկա պատիվ, չկա ճշմարտություն – այլ միայն և միայն – ոսկի, հաճույք, խարդախություն, կեղծիք և զզվելի տեսակի պոռնկություն: Պոլիսը՝ սկսած բյուզանդական կայսրներից – հսկա պոռնկանոց է» (Իսահակյան, 2020: 200):

Պատահական չէ, որ նա հենց 1912 թ. Կ.Պոլսում «Ազատամարտ» օրաթերթում (հունվարի 1, N786), տպագրում է ավելի վաղ՝ 1906 թվին գրած իր հայրենասիրական խրոխտ ասքը՝ «Ողբում եմ», ուղղված հարազատ ժողովրդին.

«Ողբում եմ դառն վիճակդ դժնյա՝ չարի, բռունցքի զոհ հազարամյա, ընկած ազգերի մեծ ճամփու վրա... հարևաններդ՝ տգետ ու անկիրթ, ամբարիշտ ոսոխ՝ տանդ մեջ նստած, քեզ լլկում նյութող, կործանում բերող և բախտակիցդ՝ լավին նախանձող, և չարախնդաց, և անվանարկու...

Ողբում եմ նորից քո արտասվելի վիճակդ անգութ, դու խավարի մեջ միշտ լույս որոնող, իմ հա՛յ ժողովուրդ – արդ առավտից մինչև առավոտ ոտներիդ ներքև ես քեզ եմ հսկում անխոնջ ու անքուն՝ քո շունը որպես...

...Ձա՛յն տուր քո վսեմ, վեհ որդիներին, որոնք ընկած են կռվի դաշտերում, կախաղանների, կացինների տակ, և՛ գնդակահար, և՛ սրախողխող, ձա՛յն տուր, և նրանք կկենդանանան և կրակի պես կսլանան, կուգան...» (Իսահակյան, 2014: V, 28):

Ավելի ճիշտ տեղ՝ քան Թուրքիան, Իսահակյանը չէր կարող գտնել այս երկը տպագրելու համար:

Դժվար չէ պատկերացնել, թե այս կոչը ինչպես ընկալվեց Թուրքիայի հայության շրջանակներում... Ոչինչ պատահական Իսահակյանի ստեղծագործության ճակատագրում չէր լինում...

Կոստանդնուպոլսում արված Իսահակյանի վերջին գործերից

մեկը պետք է համարել 1911-1912 թթ. կատարած Արթուր Շնիցլերի «Լոյտընանտ Գուստլը» վիպակի՝ Իսահակյանի հայերեն թարգմանությունը, որը լույս տեսավ Մոսկվայում՝ 1912 թ., Ա. Շնիցլերի հայերեն երկերի ժողովածուում, Ա Հատոր, էջ 38-78: Իսկ մինչ այդ ժողովածուի հրատարակվելը նա Կ. Պոլսում գրեց իր փայլուն էսսեն՝ «Արթուր Շնիցլերի ծննդյան 150-ամյակի առթիվ», որը լույս տեսավ առաջին անգամ Կ. Պոլսում «Ազատամարտ» օրաթերթում, 1912 թ., հունիսի 3-ին, թիվ 913), Ավ. Իս. ստորագրությամբ: Այն համարվում է ավստրիացի գրողի մասին լավագույն էսսեններից մեկը:

Ինչպես ասել էինք, Իսահակյանը ձեռնամուխ էր եղել Հայոց Հրատարակչականի պատվերով գերմաներենից հայերեն թարգմանել Կնուտ Համսունի «Պանը» վեպը: Եվ 1912 թ. հուլիսի սկզբներին նա Կովկասից Հրատարակչական ընկերությունից, որոշակի գումար է ստանում որպես ավանս, և հնարավորություն է ստեղծվում հեռանալ Թուրքիայից: Այդ պատեհ առիթին Իսահակյանը վաղուց էր սպասել, և երբ այն եղավ, նա անմիջապես նույն թվի հուլիսի 5-ին Պոլսից իտալական նավով մեկնեց Վենետիկ, ապա այնտեղից գնացքով՝ Վիեննա: Ընկերոջը՝ «Դասընկերի» համահեղինակ Տիգրան Ռաշմաճյանին ուղղված նամակում նա օգոստոսի 6-ին արդեն Վիեննայից գրում է. «Ինչպես տեսնում ես, ես հիմա Վիեննա եմ. ավելի քան երկու շաբաթ է այստեղ եմ: ... Վերջին ամիսներս շատ խառն էր Պոլսի փոստան, գնում ու գալիս. մեկ Դարդանելն էր գոց, մեկ Ռումելիի երկաթուղիներն էին բոմբերի շնորհիվ քանդվում. վերջապես գոնե մի առ ժամանակով ազատվեցի այդ դժոխային պայմաններից, որոնք Թուրքիան են կազմում:

Ափսոս, հազար ափսոս, այդ երկիրը, որ հոգեվարքի մեջն է. Թյուրքիան էլ որ քանդվեց, էլ գլուխ դնելու տեղ չենք ունենա. Է՛հ, մեր տերն էլ Աստված:

Առայժմ մնալու եմ Վիեննա, սակայն շատ թանգ է ապրուստը այստեղ. կարծում եմ, որ կտեղափոխվեմ Ցյուրիխ, մի փոքրիկ, հանգիստ քաղաք: Չկարողացա Պոլսում սրտիս ուզածի պես պարապել, քաղաքական անկայուն դրությունը ազդում էր վրաս, և կամա-սկամա տարվում էի այդ կյանքով, և իմ սեփական գործերս մոռանում,

կամ ավելի վերջին պլանի ձգում: Որոշել եմ Եվրոպայում ապրել, տեսնեմ ինչ կլինի վերջը... Ապրելու եմ գրական աշխատանքներով, չգիտեմ սովից պիտի ազատվեմ, թե ոչ, բայց ինչ կլինի թող լինի» (Իսահակյան բ, 2020: 201-211):

Մի այլ նամակում՝ ուղղված Սիմոն Վրացյանին, ավելի որոշակի է գրում.

«...Հոգիս, չիմանաս, թե Պոլսից փախել եմ, ո՛չ, ես դուրս եմ եկել Պոլսից հուլիսի 5-6-ին, ինձնից հետո Իթթիհատի նավը ծակվեց, իսկ կռիվը երեկ էր, որ սկսվեց» (Իսահակյան բ, 2020: 213): Եվ էլի նույն հասցեատիրոջը. «Եվ ո՞վ ասաց, թե Հայոց հարցը քնած է, մեռած է. քանի Թյուրքիան ջախջախվի, այնքան լավ, մենք ուժովնանք, ժամանակի մեջ մի բան ձեռք կբերենք...» (Իսահակյան բ, 2020: 215):

Թյուրքիայի էջը եզրափակենք Իսահակյանին լուսնի վառ շողերի ներքո այնքա՛ն անքուն գիշերներ երևացած «Ծով Մարմարայի» դյուֆական անուրջներով...

*Ոսկի թիթեռներ – ոսկեհուր աստղեր –
Ծո՛ւվ Մարմարայի – լուսեղեն անո՛րջ.
Գինով գիշերներ, լուսնի վառ շողե՛ր,
Մույգ նոճիների դյուֆական մրմո՛ւնջ...
Հուշերը նորից սիրտըս են տանջում,
Լուսեղեն երա՛գ, որ հիմա չկա.
Հոգիս մենավոր, վաստակած թռչուն,
Խավար ու խորին ծովերի վրա...
Մի երգ գիտե՛ի՝ անո՛ւշ, ոսկեշո՛ւնչ,
Լուսեղեն երա՛գ՝ հեռո՛ւ, հեռավո՛ր.
Ա՛խ, նոճիների դյուֆական մրմունջ,
Օրորե՛ք մեղմիկ հոգիս վիրավոր...*

1912, հունիսի 16,

Կ.Պոլիս (Իսահակյան, 2003: 395):

Եզրակացություն

Ավետիք Իսահակյանի Կոստանդնուպոլսյան շրջանը (1911–1912) ներկայացնում է բանաստեղծի ստեղծագործական և հոգևոր կենսագրության բացառիկ մի փուլ, որտեղ օտարության փորձառությունը վերածվում է ներշնչման աղբյուրի: Թեպետ Իսահակյանը չընդունեց Կոստանդնուպոլսի սոցիալական ու բարոյական իրականությունը և մերժեց նրա կեղծ փայլը, սակայն հենց այստեղ նա գտավ ստեղծագործելու այն ներքին ազատությունը, որից զրկված էր իր հայրենիքում: Օտար միջավայրում ծնվեցին նրա մի շարք նշանակալի գործեր՝ «Հայրենի օջախ», «Ամեն գարունքին», «Փրփուր բաշերով ծովը ամեհի», «Աղա Նազար», ինչպես նաև «Ուստա Կարո» վեպի առաջին տարբերակը և «Աբու-Լալա Մահարի» պոեմի վերջնական խմբագրությունը:

Այս շրջանը վկայում է, որ Իսահակյանի ստեղծագործական հանճարը պայմանավորված չէր արտաքին հանգամանքներով. նա կարողացավ վտարանդության և անորոշության պայմաններում պահպանել իր հոգևոր հավասարակշռությունն ու բանաստեղծական բարձրությունը: Կոստանդնուպոլսյան տարիները դարձան ինքնաճանաչման և ինքնահաստատման մի կարևոր հանգրվան, որտեղ Իսահակյանը՝ լինելով քաղաքականապես հիասթափված, մնաց հավատավոր իր արվեստին և ազգային գաղափարին:

Այսպիսով՝ Իսահակյանի կոստանդնուպոլսյան շրջանը ոչ միայն լրացնում է նրա գիտական կենսագրության մի անձանոթ էջ, այլև լուսաբանում է այն հոգևոր փորձառությունը, որի շնորհիվ բանաստեղծը կարողացավ վերածել օտարությունը ստեղծագործական ոգեշնչման և մարդկային տոկունության հաղթանակի:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Իսահակյան Ավ.**, Երկերի լիակատար ժողովածու XIV հատորով, հատոր I, Երևան, «ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2003, 992 էջ:
2. **Իսահակյան Ավ.**, Երկերի լիակատար ժողովածու XIV հատորով, հատոր V, Երևան, «Էդիտ Պրինտ» հրատ., 2014, 992 էջ:
3. **Իսահակյան Ավ. ա.**, Երկերի լիակատար ժողովածու XIV հատորով, հատոր XI, Երևան, «Էդիտ Պրինտ» հրատ., 2020, 810 էջ:

4. **Իսահակյան Ավ. ք**, Երկերի լիակատար ժողովածու XIV հատորով, հատոր XIII, Երևան, «Էդիտ Պրինտ» հրատ., 2020, 720 էջ:
5. **Իսահակյան Ավ.**, Երկերի լիակատար ժողովածու XIV հատորով, հատոր XIV, Երևան, «Էդիտ Պրինտ» հրատ., 2021, 1134 էջ:

REFERENCES

1. **Isaakyan, Avetik.** *Complete Works in 14 Volumes*, Vol. V. Yerevan: Edit Print Publishing House, 992 p.
2. **Isaakyan, Avetik.** *Complete Works in 14 Volumes*, Vol. XI. Yerevan: Edit Print Publishing House, 1920, 810 p.
3. **Isaakyan, Avetik.** *Complete Works in 14 Volumes*, Vol. XIII. Yerevan: Edit Print Publishing House, 2020, 720 p.
4. **Isaakyan, Avetik.** *Complete Works in 14 Volumes*, Vol. XIV. Yerevan: Edit Print Publishing House, 1134 p.